բարձրանալ։ Նուրէտտինի մահէն յետոյ սկսաւ անոր երկիրները գրաւել մինչև Հալէպ։

Սալահէտտինի գլխաւոր գործն էր Երուսաղէմի գրաւումը քրիստոնեաներէն, 1187 Հոկտ. 3։

Մեռաւ 1193 ին։

Սալահէտտինը աչալուրջ չրջահայեաց և քաջ իշխան մ'էր. արդարութիւնը կը սիրէր և իւր խօսքը կը բռնէր. 17 որդի և մէկ աղջիկ ունեցաւ, և ինքը եղաւ Եգիպտոսի Էյուպեանց հիմնադիրը։

Քիւրդերը իրենք կըսեն որ Սալահէտտինը Լէվինցի է, և իր իշխանութիւնը Քրդական իշխանութիւն էր, իրր յաղթական տիրապետութիւն օտար երկիրներու վրայ։ Սա քիւրդ տեսակէտ մը է, որ չ'ըմբռներ համայնքի իշխանութիւնը որմէ բղխած լինի անհատներու վարչութիւնը. այլ կընդունի որ անհատներն են, որ տիրելով ժողովուրդներու՝ կը դառնան կուսակիցներ և կը կազմեն իշխանութիւն։

Ուրիշ Քիւրդ պետական և զինուորական մարդկանց անունները թուազրել և յիշատակել մեզ հնարաւն կը տանի. Թիւրք և Պարսիկ քաղաքական և զինուորական պատմութեան մէջ բաւական թիւ կը կազմեն անոնք։

Այս պետական և զինուորական անհատականութիւնները մեզ համար կը ներկայանան իրր Քիւրդ ցեղի յատկանշական կողմը միայն՝ որ առնչութիւն մը չունի Քիւրդ ցեղական պետականութեան և զինուորականութեան հետ։

ՔԻՒՐԴԵՐԸ Ի ԲՆԷ ԵՒ ԱՅԺՄ
ՆԻՒԹԱՊԱՇՏ (Matérialiste)

«Աշխարհիս մէջ հազիւ թէ կարելի լինի քրդականին պէս, աշխարհէ օտարացած երկրորդ ցեղ մը գտնել»։

«Տէր Քրիստլիեբ Օրիէնդ»

Քիւրդը բնաւ հայեցողական կեանք չունի. որքան ալ և ինչ պարագաներու մէջ աշխատութիւն թափուած է զրդռեալ